# Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը «Մայրենի», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում

Կատարող՝ Հասմիկ Խաչատրյան

Դպրոց՝ Հ. Ավետիսյանի անվան համար 74 հիմնական դպրոց

Առարկա՝ գրականություն

Կազմակերպություն՝ «Կրթություն առանց սահմանների» Հ/Կ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

Ներածություն

... Ամենակարևոր բաները մեզ ոչ ոք չսովորեցրեց։

Առաջին դասարանում անցանք այբուբենը, դա հետո էլ կսովորեինք։ Հետո թվաբանության դասատուն մեզ անգիր անել տվեց բազմապատկման աղյուսակը ... երբ կյանքում մենք անընդհատ բաժանվելու էինք՝ մեր մտերիմներից, մեր հույսերից, մեր ապրած տարիներից ....

Սովորեցրին հին ու նոր ժամանակների պատմություններ, որ ի՞նչ ...

... Եվ ոչ ոք չսովորեցրեց ինչպես հասկանալ կողքինի տխրությունը, ինչպես լսել լռությունը, ինչպես տառապել ... արժանապատվությամբ։ Թողեցին, որ այդ ամենը սովորենք ինքնակրթությամբ՝ ինչպես ասում են։

... Իսկ ավելի մարդավարի ասած՝ մեր սրտերի վրա ստացած վերքերով պիտի սովորեինք ամենակարևոր բաները։

Իսկ վերքերից սպիներ են մնում ...

Վարդգես Պետրոսյան

Ժամանակակից դպրոցը իր առջև ունի դրված շատ մեծ խնդիրներ, քան անցյալում, քանի որ պետությունը կրթությունը դիտարկում է որպես հասարակությունը և պետությունը զարգացնելու շարժիչ ուժ և հիմնական խթան: Իսկ հասարակության և պետության զարգացումը ազգային անվտանգության գլխավոր բաղադրիչն է:

Այժմյան դպրոցը կոչված է սերունդներին փոխանցել մարդկության փորձն ու մշակութային ժառանգությունը, որի յուրացումը ենթադրում է արժանապատիվ ու գիտակից քաղաքացու ձևավորում և զարգացում:

Ժամանակակից կրթության առաքելությունն է դասավանդման միջոցով նպաստել մարդու մտավոր, հուզական և կամային կարողությունների ներդաշնակ զարգացմանը, որի արդյունքում կունենանք հավասարակշռված և գիտակից քաղաքացիներ: Եթե դպրոցը բացի գիտելիք տալուց կարողանա մեծ մասամբ լուծել նաև այս խնդիրը, մենք մոտ ապագայում կունենանք հասարակության գիտակցական մակարդակի բարձրացում:

Արդի դպրոցը ժամանակակից մարտահրավերների պայմաններում ունի խնդիր դաստիարակելու և կրթելու ոչ միայն տնտեսական և քաղաքական

օրենքներն ըմբռնող մարդ, այլև ձևավորելու ազգային մտածողություն ունեցող քաղաքացի։

Ճիշտ է, երեխան առաջին հերթին ձևավորվում է ընտանիքում և նրա արժեքային համակարգը՝ պատկերացումները լավի ու վատի, չարի, բարու մասին ձևավորվում են առաջին հերթին հենց ընտանիքում։ Սակայն դպրոցը կրթական գործընթացը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու դեպքում ի զորու է շատ բան փոխելու, վերարժևորելու։

## Գլուխ 1

Արժեհամակարգը մարդու բարոյական, իմացական, մշակութային և ազգային արժեքների համախումբն է։ Եվ սրանք են ապահովում անձի ներդաշնակ զարգացումը։ Արժեհամակարգի ձևավորումը կատարվում է յուրաքանչյուր առարկայի ուսուցման ժամանակ, սակայն, պետք է խոստովանենք, որ «առյուծի բաժինը» այնուամենայնիվ մնում է հումանիտար առարկաներին, մասնավորապես գրականությանը և մայրենիին։ Այս երկու առարկաների ժամերին է հատկապես հնարավոր հստակ աշխատել անհատի արժեհամակարգի ձևավորման ուղղությամբ։

Գրականությունը գեղարվեստական պատկերի բացահայտման շնորհիվ մեզ տալիս է բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի հասկացություններ։ Զգացական պատկերի և անկեղծ ապրումի միջոցով գրականությունը թրծում է հոգին և համոզիչ ազդեցություն է ունենում մարդու մտքի վրա՝ ձևավորելով նոր, դրական որակ։

Գրականությունը նաև ազգային կյանքի ու հայ մարդու ձևավորողն ու «դաստիարակիչն» է, հայ մարդու բարոյական նկարագրի կերտողը, քանի որ գլոբալիզացիայի դարում սրված է նաև մեկ այլ հիմնախնդիր՝ ինչպես չկորցնել ազգային դեմքը՝ մտնելով համամարդկային կյանք։ Այստեղ մեծ

պատասխանատվություն է ընկնում գրականության ուսուցչի ուսերին, քանի որ լուսավոր գաղափարներին՝ արժեքային համակարգին, աշակերտներն առնչվում են գրողների ու բանաստեղծների ստեղծագործությունների միջոցով:

Եվ ուսուցիչը, գործածելով իր զինանոցում եղած հմտություններն ու զանազան մեթոդները, ջանում է տեղ հասցնել այն վեհը, գեղեցիկն ու մարդկայինը, որն արտահայտված է տվյալ ստեղծագործության մեջ:

Ուսուցման գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ են տարբեր մեթոդների իմացությունը և ուսման նպատակներից բխող մեթոդների ճիշտ ընտրությունը:

Արժեհամակարգի ձևավորման համար առավել հաջողված է հարցադրումների մեթոդի կիրառությունը: Հարցադրումների՝ որպես դասավանդման մեթոդ կիրառելը ունի մի քանի առավելություններ՝

- մեթոդը կարող է ցույց տալ թեմայի տրամաբանությունն և խրախուսել հասկանալը, ոչ թե անգիր անելու սովորությունը
- ապահովում է, որ ստացած գիտելիքի վրա կառուցվի նորը
- ստեղծում է այնպիսի գիտելիք, որը փոխանցելի գիտելիք

- ակնթարթային կապ տալիս է սովորելու գործընթացի մասին
- աշակերտի սովորելու տեմպը և դասի ընթացքը դառնում են համահունչ
- այն սովորաբար ակտիվ ու հետաքրքիր մեթոդ է աշակերտների համար
- թույլ է տալիս կիրառել նախորդ դասերի ընթացքում ստացած մտքերն ու բառապաշարը
- հնարավորություն է տալիս վեր հանել սխալները՝ թույլ տալով, որ տեղի ունենա «սովորածը մոռանալու» գործընթաց
- աշակերտի տված հարցերի միջոցով ուսուցիչը հասկանում է, թե որտեղ է դժվարանում աշակերտը, դասի որ մասն է մնացել անհասկանալի
- ուսուցիչը կարողանում է գնահատել ուսումնառության վերջնարդյունքը
- օգնում է զարգացնել բարդ մտածողություն:

Այս մեթոդն ունի նաև թերություններ, դրանք են՝

- մեթոդի կիրառումը կարող է լինել ժամանակատար
- խմբի ոչ բոլոր աշակերտներն են ներգրավված լինում աշխատանքի մեջ:

Առաջադրվող հարցերն ու հարցադրումները ապահովում են երեխաների ակտիվ մասնակցություն

ու ակտիվ ներգրավում դասապրոցեսին: Հարցերը խթանում են երեխաների քննադատական, ստեղծագործական մտածողությունը, օգնում հիմնավոր ընկալել տեղեկատվությունը, վերլուծել, համակարգել դասի ընթացքում ստացածը: Հարցերը պետք է լինեն՝

- տրամաբանական հաջորդականությամբ
- նպատակաուղղված
- հստակ
- հակիրճ
- տեղին
- երեխաների մակարդակին համապատասխան
- մտածելու տեղիք տվող /Ա. Ղ./

Սակայն չափից շատ հարցերի գործածումը կարող է ունենալ բացասական արդյունք, օրինակ՝ աշակերտները կարող են պասսիվություն դրսևորել, նրանք կարող են դադարել մասնակցել քննարկմանը: Շատ հարցեր տալը կարող է նրանց համար նմանվել հարցաքննության և առաջացնել վախի զգացողություն:

Մտածական գործընթացը զարգացնելու համար կարևոր է սպասելու ժամանակը, որովհետև այն ազդում է պատասխանների քանակի և որակի վրա:

Հարցադրումների մեթոդը ուսուցման հզոր ռազմավարություն է: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն ունի առանցքային դեր: Ճիշտ և ժամանակին կատարված հարցադրումները կարող են շարժել աշակերտի հետաքրքրությունը, մղել վերլուծության, զարգացնել քննադատական մտածողությունը և օգնել յուրովի արժևորել ուսումնասիրվող նյութը, հանգել եզրակացությունների:

## Գլուխ 2

Հարցադրումների մեթոդը հաջող կերպով կարելի է կիրառել Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը ուսուցանելու ժամանակ: Դասը կարելի է սկսել շարադրությունով, որը գրում են հետևյալ թեմաներից որևէ մեկով.

1. Ո՞վ է լավ մարդ և ինչու՞:
2. Ու՞մ եմ հիշում տհաճությամբ և ինչու՞:
3. Ո՞վ է հիշվում տարիների ընթացքում:
4. Ու՞մ եմ հիշում երախտագիտությամբ:
5. Ո՞վ է հիշվում տարիների ու դարերի ընթացքում:

Շարադրությունը գրում են 5 րոպեի ընթացքում: Աշակերտները կարդում են շարադրությունները և ուսուցչի ուղղորդող հարցերի շնորհիվ վեր են հանում մարդու կատարած գործի կարևորության գաղափարը:

Հաջորդ դասաժամին, երբ աշակերտները արդեն ծանոթ են նյութին, ուսուցիչը տալիս է քարտերի վրա գրված հարցեր, որոնց պատասխանները պետք է փնտրեն պոեմի համապատասխան մասերում:

1. <<Թմկա բերդի առումը>> պոեմի ո՞ր հատվածում է արտահայտված հիմնական գաղափարը:

2. «Թմկա բերդի առումը» պոեմի ո՞ր հատվածում է գայթակղվում Թմկա տիրուհին։

3. Ո՞ր հատվածում է նկարագրվում քաջ Թաթուլը։

4. Ո՞ր հատվածում է ներկայացված Նադիր շահը։

Կշռադատման փուլում կատարել հետևյալ հարցադրումները.

1. Ինչու՞ էր Նադիր շահը դառնացած։

2. Ո՞րն է աշխարհքի բանը որը անցնում է շահի մտքով։

3. Արդյո՞ք համապատասխանում են իրար Թմկա տիրուհու ներքին և արտաքին գեղեցկությունը։

4. Ի՞նչն է դրդում իշխանուհուն դիմել այդ քայլին։

5. Աշակերտները արդարացնու՞մ են, թե՞ խղճում Թմկա տիրուհուն։

6. Ինչու՞ է շահի վերաբերմունքը կոպիտ Թմկա տիրուհու հանդեպ։

7. Ինչու՞ իշխանուհին անուն չունի։

8. Ի՞նչ պատգամ է տալիս Թումանյանը պոեմի վերջում։

Մայրենիի դասընթացի ժամանակ արժեհամակարգ ձևավորելու համար նպատակահարմար է կիրառել մանրակերտի մեթոդը։ Այն ավելի հարմար է կիրառել դասի ամփոփման ժամանակ, երբ վեր են հանվել կարևոր մտքերն ու գաղափարներն։

Քայլերը՝

1. Գրել մեկ բառ, որն արտահայտում է տեքստի հիմնական ասելիքը։

2. Գրել մեկ բառակապակցություն, որը կարևոր է տեքստի համար։

3. Գրել մեկ նախադասություն, որն արտահայտում է տեքստի գլխավոր միտքը։

4. Ավարտել հետևյալ միտքը՝ «Ինձ համար ամենակարևորն այն է, որ….»։

5. Յուրաքանչյուր աշակերտ նկարում է տեքստին առնչվող որևէ խորհրդանիշ։

Առաջին քայլերը չորրորդ դասարանցիների համար նպատակահարմար է անել հարցադրումների օգնությամբ. ո՞րն է ստեղծագործության ամենակարևոր բառը, ո՞րն է ստեղծագործության ամենակարևոր բառակապակցությունը, ո՞րն է ստեղծագործության ամենակարևոր նախադասությունը։

Այս մեթոդը կարելի է կիրառել «Շնիկը», «Լավ ընկերը» թեմաների ուսուցման ժամանակ: Մեթոդը կօգնի գնահատել հերոսներին բնութագրող հատկանիշները՝ անտարբերություն, սրտացավություն, ուրիշին օգնելու պատրաստակամություն և վերաբերմունք դրսևորի նրանց նկատմամբ:

Ըստ Իննա Փարեմուզյանի «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում» ուսումնասիրության՝ յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հայոց լեզվի ժամին թեպետ չկա հստակ թեմաների միջոցով հայրենասիրական, ազգային, նաև համամարդկային արժեքները

ներկայացնելու ու դասի թեմաների միջոցով աշակերտներին ուսուցանելու, քննարկելու հնարավորություն, և հաճախ քերականական բարդ թեմաները պահանջում են ամբողջ դասժամանակը, սակայն հայոց լեզվի ժամին է որ աշակերտները պետք է սովորեն ու հասկանան կարևորագույն արժեքներից մեկը՝ հայ ժողովրդի հենասյուներից գլխավորը, այն ինչը մեզ հնարավորություն է տվել հարատևելու, չձուլվելու, ստեղծագործելու, արարելու՝ հայոց լեզուն։

Լեզվի անաղարտության պահպանումն է, որ պետք է հայոց լեզվի յուրաքանչյուր դասաժամին աշակերտները յուրացնեն՝ հասկանալով դրա դերն ու կարևորությունը ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում և հայ ժողովրդի ապագան կերտելու ու հայ մտքի շարունակականությունը պահպանելու համար։

Այսպիսով, կարևոր է աշակերտներին սովորեցնել ու հիշեցնել ամեն անգամ, որ պահպանեն լեզվի ուղղախոսության կանոնները, գործածեն մաքուր հայերեն խոսք, զերծ մնան խոսքում օտար բառերի կիրառությունից և հայերենը աղավաղելուց։

Լեզուն անաղարտ պահելը ամենակարևոր արժեքն է, որի ուսուցումը չի պահանջում հստակ մեթոդների կիրառություն, քանի որ գրեթե բոլոր դասերի ու թեմաների հետ կարելի է նրբորեն մատուցել։

## Եզրակացություն

Այսպիսով, երբ հասարակության մեջ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում է անօրինականությունը: Մարդիկ դժբախտանում են, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իր իմաստի զգալի մասը, մարդիկ հեշտությամբ իրար վնասում: Հենց այս պատճառով է որ կրթության գլխավոր իմաստն ու հենքը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորում: Դպրոցը պետք է լինի այն օրինակելի տարածքը, որտեղ ձևավորվում են իրական արժեքները: «Այբ» դպրոցի տնօրեն Արամ Փախչանյանի այս խոսքերը լավահույնս ամփոփում են հետազոտության թեման՝ արձանագրելով, որ ժամանակակից մարդու ձևավորման հիմքը, նրա աշխարհայացքի ու արժեհամակարգի կերտման հիմնական պատասխանատուն դպրոցում ստացած կրթությունն է:

## Գրականության ցանկ


- Ինննա Փերեմուզյան – Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթակն ուսումնական հաստատությունում
- Ասյա Ղուկասյան – Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը
- https://lib.armedu.am/ Բաբերցյան Լարիսա - Հարցադրման մեթոդ
- https://mediamax.am/am/column/12925/ Արամ Փախչանյան - Դպրոցը, արժեքները եւ տարատեսակ «ազատությունները»